ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

ՈՒ Ղ Ե Ր Ձ

«07» ապրիլի 2025 թվականի

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՊՐԻԼԻ 7-Ի ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հայ Առաքելական եկեղեցին այսօր նշում է Ավետման տոնը, որը հայտնի է նաև որպես Մայրության տոն:

Մեր ազգային ավանդույթներն ու տեսակն առանձնակի են կարևորում հայ մայրերի դերը: Հայկական իրականության մեջ հայոց մայրերը օջախի, բնօրրանի հենասյունն ու պահպանման գրավականն են, ովքեր հաղթահարելով կյանքի ցանկացած մարտահրավեր՝ կարողանում են կրթել, դաստիարակել, արարել, ստեղծել ու չհանձնվել:

Սիրելի՛ մայրեր, գնահատելի է ձեր մեծ առաքելությունը, որը կատարում եք անմնացորդ նվիրումով ու ամենայն պատասխանատվությամբ:

Շնորհավորում եմ ձեզ նվիրված ամենաջերմ ու գեղեցիկ օրվա՝ Ապրիլի 7-ի առթիվ, մաղթում, որ ձեր ընտանիքներում հարատևի առողջությունը, սերը, երջանկությունն ու խաղաղությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ